

## ԱՐՀԵՍՏԻ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Արհեստաւոր եմ՝ ուրախ ամենքից,  
 Ամուր երկաթէ կաղմուածք ես ունիմ՝  
 Շինում եմ գործիք թանգ ու պատուական,  
 Օգուտ եմ տայիս մարդկային ազգին:

Արև չք ծագած՝ խանութ եմ գնում,  
 Գործս ծիծաղ դէմ—երգով սկսում:  
 Եւ թանձր մուրձի ամուր հարուածքից՝  
 Գործատան պատերն եմ շարժեցնում:

Ժանգոտ երկաթի պինդ—պինդ կտորներ  
 Շնորհիւ քաջ բաղկիս ուժեղ հարուածքի՝  
 Լաւ տափակում են՝ ընդունում ձևեր  
 Զանազան տեսակ սիրուն գործքերի:

Ճաշումեմ ես միշտ համեստ հասարակ,  
 Զոր հացը համեղ պատառ է թուում:  
 Թէպէտ անկողինս է կոշտ կոպիտ շոր,  
 Բայց ես շատ հանգիստ ու լաւ եմ քնում:

Եւ քունը շուտով գալիս է աչքիս.  
 Խիղճս հանդարտ է իրրև մի մանկան.  
 Իմ աշխատանքիս սակաւ փաստակով  
 Այժմ լինում եմ ես միշտ բաւական. . . :

Տարուայ տասներկու երկար ամիսներ,  
 Անցնումեն ինչպէս մի մի կարճ շաբաթ.  
 Թէև քիչ անգամ հազնում եմ նոր շոր,  
 Բայց պինդ կուրծք ունիմ իրր ամուր պողպատ:

Այսպէս իմ օրեր սահումեն ուրախ,  
 Յիսուն տարիս է—մօտ եմ ծերութեան,  
 Եւ երբ մահս գայ ես բաղկատարած,  
 Գրկելով նորան կրնկնեմ գերեզման. . . :

Եթէ մեռնեմ էլ առաւել շուտով,  
 Բայց աչք չեմ գնիլ ուրիշի փառքին.  
 Եւ, երբ հոսում է քրտինքն իմ ճակտով  
 Կարծում եմ տէր եմ բոլոր աշխարհքին. . . :